ի միջոցին յորում եկաց արքային Հայոց Հեթում Բ. յԵրուսաղէմ, չինեաց սեղան ի տաճարին Ս. Աստուածածնի յարեւելս կոյս. յեց յորմն դերեզմանին, թէպէտ գրէ Հաննա վարդապետ ի Պատմութեան իւրում, Եր՝ 297. այլ առանց թուականի և առանց որոշելոյ թէ ո՞ր Հեթում իցէ։ Եւ Հ. Մ. Զաքեան. Հաթ. Գ. 196. ասէ զչինուիլն սեղանոյն այնորիկ Հեթմոյ առաջնոյ առեալ ի սոյն պատմագրէ, այլ որ և իցէ, սեղանն այն իրրեւ յիշատակ նախնեաց մերոց է ի ձեռս մինչեւ ցայսօր ազգին Հայոց։ Նոյնպէս ի տաճարին Ս. Յարութեան ի կողմն սնարից Ս. Գերեզմանին, ի մէջ հինգերորդ կամարի, (նախ քան զհրդեհն) չինեալ է Հեթում Բ. սեղան մի անճոռնկոյթ, որ յետոյ տուեալ են զայն Հայք Գալթոց, եւ փոխանակ նորա առեալ են եկեղեցի մի յեգիպտոս. Տե՛ս Գէդ Հաճա վըրպապեաի. 233։ Իսկ զկնի ժամանակաց իշխանք նոցին կամ կղերք ծածկեալ և ձեւացուցեալ զսոյն մատուռ ինն և է ցարդ ի ձեռս նոցա (1)։

Ի մեկնիլ Թամաթայ ի Պաղեստինոյ՝ անկաւ վերատին աշխարհն ընդ իշխանութեամբ Սուլթանացն Եգիպտոսի, ընդ որս եւ երուսաղէմ. Մէլիք Նասր էառ զնաշաւանքն արտաքոյ երուսաղէմի, որ ի սոյն ժամանակի էր ի ձեռս ազգին Վրաց, և կարգեաց զսոյն մզկիթ այլազգեաց. իբրեւ լուան զայս թագաւորն Վրաց եւ կայսրն Յունաց, առաքեցին պատգամաւորս հանդերձ թղթովք և մեծամեծ ընծայիւք, և խնդրեցին դարձուցանել զսոյն առ ազգն Վրաց. ի հասանիլ պատգամաւորացն յեգիպտոս, զիջաւ Նասր յաղաչանս նոցա, և առաքեաց զնոսա յերուսաղէմ թղթով առ փոխանորդն իւր, եւ նորա ընկալեալ զհրամանն յանձնեաց անդրէն զվանս ի ձեռս պատգամաւորաց (1305)։

Սոյն այս Մէլիք Նասր հռչակաւոր ի Սուլթանս եգիպ-

---

(1) Եթէ սոյգ է բան Հաննային, ապաքէն մեծ սխալմունք է, կորուսանել զպնդիսի յիշատակ առն մեծի և թագաւորի, և փոխարէնեալ եկեղեցին եգիպտոսի այժմ չէ ի մէջ, և ոչ յիշատակ նորա։

Այս արկածք դիպել յաւուրս Պատրիարգութեան Սարգսի Ա. որպես գրի ի յիշատակարանս Հարանց վարուց 1311։